

Ս. Բ. ՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՍԻՌՆ իր սուզին ոչինչ հակառակեալ կը նկատէ մասնակցութիւնը հայ մեծանուն մտաւորականին և զրազէտին յիսնամեայ յոբելեանին:

Այդ ածել մեզի համար ցնծութեան առիթ մը ըլլալէ աւելի պատեհութիւն մըն է հոգեկան կազդուումը: Զօպանեան մեր մէջ գէշ մըն է, կարեւորներու զիծին վրայ փայլող իրօք և նիրաւամբ, որ իր վրայ կը միացնէ մտքուր ազգասէրի և հայրենասէրի, անխոնջ գործիչի, նուրբ բանաստեղծի, ընտիր զրազէտի և զրասէրի, քաղմարդիւն խմբագրի և հրատարակագրի, տաղանդաւոր մատենագրի և թարգմանչի և այլն բոլոր բարեմասնութիւնները: Իր մասին զգացուած զորովը որ և է ազգ պատուաբեր և պարտականութիւն միայն պիտի նկատէր իրեն՝ անոր նման իր մէկ գաւկիին համար: Սրժանի է հետեւաբար որ այս առթիւ իր մասին մեր ժողովուրդին սիրոյ և յարգանքի՝ զգացումն ու մտածումը հանրական ըլլան և ազգային:

Այդ բարեմասնութեանց մէջ առաջին մասնանշեցիւնք ազգին և հայրենիքին ուրբ. ա՛յդ է արգարե իրականութիւնը. Զօպանեան այն ազնուական հայերէն է, որոնք ինչ որ ունին իրենց մէջ բարի և քեզեցիկ, ուզած են միշտ ընծայել քերականաց խտէլին որ ազգին և հայրենիքին գաղափարն է եղած իրենց համար. անոր քարքարուաներն ի վեր ամէն օր հեխէն և հալումաշ, առանց թէ և բնաւ պորտաւսելու, անո՛ր միշտ զոհարներ է ան իր եռանդը, իր քնարը, իր գրիչը, իր տաղանդը, և ինչ որ եղաւ ինքը սկիզբէն ու մնաց մինչև վերջ, ահա կէս գարէ ի վեր, իրբե միտք, սիրտ և կամք, համակ նուիրում և եռանդ:

Իբրե խմբագիր, Ծաղիկովը, որ, աւելի քան քառասնեակ մը տարիներ առաջ, բուն զրական ուսումնասիրութիւն յարացոյցը բերաւ արեւմտահայ մտածողութեան և ճաշակին, և Անահիտովը, որ նոյն ոգւով և ուղղութեամբ բայց աւելի լայնանիստ պատուանդանի մը վրայ բարձրացած փարոս մը դարձաւ հայ կեանքի մշտաւեկոծ իրականութեան մէջ, ան այդ գեանին վրայ իրեն համար շինած է արդէն արժանիքի առումը կուսան մը. իբրե հրատարակագիր, իմէ կարեւորութիւն ըլլաւ ի մի բերելով հատոր առ հատոր հրատարակելու այն բազմաթիւ յօդուածները, զորո համառօտաց շարունակ Կ. Պոլսոյ անգլագական Հայրենիքէն սկսեալ մինչև այսօրուան Ապագայի մէջ և այլուր, մինչ իր համեստութիւնը պիտի զարմանար միայն թէ ի՞նչպէս ժամանակ գտեր էր արտագրելու այդ ամէնը, իր ընթերցողները հիացումով պիտի վերծանէին անոնց մէջ երկար տեղութեան մը վրայ օրը օրին սահած անցած ազգային կեանքի մը բոլոր ելեղներուն վրայ մտացի և ողջադատ անդրադարձութիւններ, անոնց մէջ գտնելով ապրուած անցեալի մը վրայ գրուած ազգային և ընկերային պատմական իմաստասիրութեան էջեր մանաւանդ:

Ու պիտի փափաքէի որ իր մէջ բանաստեղծը չգործովուէր բնաւ թէ ի՞նչ կրնայ մտածուիլ կամ խորհուած ըլլալ իր ամենէն անառիկ տիտղոսներէն այդ մէկին մասին. կրնան գուցէ օր մը մոռցուիլ իր բոլոր քերթութեանները, բայց այն երկուքը . . . Սօրք և Գեղովը, զորս գոց գիտեն այլեւ շատեր հայ օրիորդներէն և աղաքներէն, անմոռանալի պիտի պահեն իր ճշմարիտ բանաստեղծի անունն ու գործը:

Իբրե գրագէտ, ինչպէս Սիւնի մէջ յառաջիկային փաստօրէն պիտի երեւի իր տաղանդաւոր արուեստագիցի՝ Օշականի՝ ուսումնասիրութիւնէն, մեր արդի զրականութեան առմենէ կարեւոր գործածողներէն մին է այն, վարպետ մը նոյն ինքն, որմէ ինքզինքներէն ազգուած յայտարարուելէ չեն քաշուիլ բնաւ մեր ամենէն արժանաւոր գրողներէն շատեր. իսկ իբրե մատենագիր և թարգմանիչ վերջապէս, ո՞վ կրնայ անտեսել իրնքը Դուրեանի, Պէշեքճաշեանի, Նարեկացիի, Պարոնեանի, Քուչակի, Սրիմեանի, Թէրզեանի և բազմաթիւ ուրիշներու նուիրուած իր այնքան մեծարժէք ուսումնասիրութիւն-

ներէն, և ֆրանսերէնէ հայերէն և հայերէնէ ֆրանսերէն մանաւանդ բազմահատոր վերածումներէն վերջ, որոնց առաջիններովը մինչ կը ձգտէր եւրոպական գրականութեան դեղեցկադոյն էջերով զօրացնել մերինը, երկրորդով կը ցանկար եւրոպական ծանօթութեան ներկայացնել պզտիկ ազգի մը սրտի և մտքի մեծութիւնները:

Այս վերջին տեսակէտով մանաւանդ շատ մեծ հղաւ իր ծառայութիւնը իր ազգին. եւրոպական հայասիրութիւնը, ֆրանսական ոլորտին մէջ մանաւանդ, շատ ինչ կը պարտի իր գրչին և սրտին: Իսկ ջերմաջերմ և սրտեւանդն այն շահագրգռութիւնը, զոր անընդհատօրէն ցոյց առաւ ինք որ և է հարցի, որ և է գործի, որ և է դէպքի, որ և է երեւոյթի, որ և է անձի — ըլլալ այն ուսանող մը կամ մտաւորական կամ քաղաքական գործիչ հայ մը — վերաբերմամբ, և ճիշդ ամէնուն ընծայելու անպատճառ խօսքով, զրչով կամ պարզեամբ իր անկեղծութիւնը, իր մէջ ցոյց կուտայ աննկուն անկեղծութիւնը, իր ժողովուրդին ցաւերուն և պէտքերուն երես չդարձուցած վեհանձն այն հոգիին, որ մտաւորական շնորհներով ևս այնքան զարգարուած, ինքը եղաւ, ճշմարիտ և ազնուական զաւակն իր ազգին, արժանի յաւէտ անոր սիրոյն:

ԽԱՐԱ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՇԱՆԱԳԻՐ ԿԱՐԳԱՑ ԲԱՆԻՑ ԵԶՆԿԱՆ ԵՐԻՑՈՒ

Պարսի Ազգային Մատենադարանի հայ ձեռագրական հաւաքածուի մէջ կարեւորագոյններէն մէկն է թիւ 51, նոր ցուցակով թիւ 112, ձեռագիրը որ պարունակում է Յանախապատում և Ակաբանկեղոս, և զբււում է 1254 թուին Իտալիայում ոմն Վարդանի ձեռքով:

Ձեռագիրն իր նախնական վիճակի մէջ չէ, երևում է քայքայուած գրութեան մէջ է եղել և մի ունյալ ա ձեռք նորոգել է, կարկատել, և մի կարեւոր փոփոխութիւն մտցրել. ներկայումս Յանախապատումը բռնում է թղ. 1-104, որից թղ. 1-58, ուրեմն գրիթ է կէսը նոր գրչութիւն է եւ պատկանում է նորագոյնին. թղ. 104, 105, 106 և 107 պարայ են. իսկ թղ. 108 ըսկրուում է Ակաբանկեղոս և հանում մինչև 292ա թղիկի թուարկողը սխալմամբ մի թուղթ չէ համարել, և Ագաթանգեղոսի վերջին թուղթը հաշուել է 291, փոխանակ 292: Գրութիւնը երկսիւն է և թղ. 292 ա-

ռաջին էջի երկրորդ սիւնակի կէսից սկսւում է եղիկ երէցի նշանագիրը, հետևում է թղ. 293բ ժամանակի հայրապետացն հայոց պատարկը և վերջանում թղ. 294 գրչի յիշատակարանով:

Ձեռագրի նորագոյնը նշանակել է ստուրին լուսանցքներում տետրակների թուահամարը՝ Ա-ԻԶ, ընդամենը ուրեմն 26 տետրակ:

Սակայն բուն ձեռագրում, գրիչ Վարդանի ձեռագրում, առաջին տեղը բռնելիս է եղել Ակաբանկեղոս և երկրորդ՝ Յանախապատում, ինչպէս կարելի է տեսնել տետրակների հին թուահամարից, որ տեղանք պահուել է ստորին և վերին լուսանցքներում, շատ տեղ փոխել է նորագոյնը: Այսպէս Ակաբանկեղոսի առաջին էջի ստորին լուսանցքում պարզ նշմարելի է Ա տառը, առաջին տետրակը, և Յանախապատումի վերջին տետրակը կրում է Զ տառը, որից հետևում է որ ձեռագիրն իր սկզբնական վիճակի մէջ ունեցել է 27 տետրակ Ա-Զ: Նորագոյն Ա ուղղել է ԺԱ աւելցնելով Ժ տառը հին Աին նոր թանաքով և նոր գրչչով: Նմանապէս հին Ո ուղղուած է Զ, հին Զ ուղղուած է Է: Միայն Ակաբանկեղոսի բնագիրը բռնել է հումն 16 տետրակ, իսկ Յանախապատումը՝ 11, նորա-